Геноцид армянского народа - это исторический и правовой, неоспоримый факт. Все существующие международно-правовые нормы классифицируют массовое убийство армянского народа как преступление против человечества – геноцид, который инкриминируется Турции, и виновный в доказанном преступлении не может оставаться безнаказанным.

Геноцид армян – это не только трагедия армянского народа, а трагедия всего цивилизованного мира.

Давтян Давид

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐ

Բուն Բարեկենդան

Մեծ պահքի բարեկենդանը կոչվում է Բուն Բարեկենդան, քանի որ նախորդում է ամենաերկար պահքին: Բարեկենդանը մարդու երջանկության հիշատակն է, որը դրախտում վայելում էին Ադամն ու Եվան: որտեղ մարդուն արտոնված էր ճաշակել բոլոր պտուղները, բացառությամբ բարու և չարի՝ գիտության ծառի պտղից, որը պահքի խորհրդանիշն է: Բարեկենդանն առաքինությունների արտահայտություն է: Այդ օրը մարդիկ սգից անցնում են ուրախության, չարչարանքից՝ խաղաղության: Այս ընկալմամբ է, որ յուրաքանչյուր քրիստոնյա հոգու խոնարհումով, ապաշխարությամբ, պահքով և ողորմության հույսով սկսում է Մեծ պահքի 40-օրյա ճանապարհը: Այն տևում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչև Ս. Հարության՝ Զատիկի տոնը:

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք: Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից և այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու անօգուտ է: ,Լեռան քարոզումէ Քրիստոս պահքի մասին ասում է. ,Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երևալը և նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը և լվա քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, և քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ : (Մատթ. 6:16-18):

Մեծ Պահքն ունի յոթ կիրակի, յոթ հիշարժան օրեր՝ Բուն բարեկենդան, Արտաքսում, Անառակի, Տնտեսի, Դատավորի, Գալստյան և Ծաղկազարդ: Ժողովրդական սովորության համաձայն՝ Մեծ Պահքի կիսվելու՝ Միջինքի օրը, բաղարջից պահոց գաթա են պատրաստում, որի մեջ մետաղադրամ են դնում: Սովորության համաձայն՝ բաժին հասնող մետաղադրամը հաջողություն է բերում:Մեծ Պահքի շրջանում վաղնջական կանոններով արգելված են եղել պսակադրությունները և մատաղը: Սակայն Վազգեն Ա կաթողիկոսի շրջաբերականով թույլատրվեց պսակադրություն կատարել Մեծ Պահքի շաբաթ և կիրակի օրերին, բացառապես Ավագ շաբաթվա բոլոր օրերի:

Եկեղեցական տոնացույցի համաձայն տարին բաժանվում է տոնական և պահոց

օրերի: Պահոց 158 օրերի մեծ մասը կարճատև պահքեր են՝ օրապահքեր (չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի մատնության և չարչարանքների) և շաբաթապահքեր, իսկ առավել ժողովրդականություն վայելող և ամենաերկարատև պահքը Մեծ կամ Քառասնորդական պահքն է: Ի՞նչ է պահքը Առաջին իմաստով այն կամավոր ինքնազրկումն ու զսպվածությունն է սննդի նկատմամբ: Եկեղեցական ավանդության համաձայն՝ երեք տեսակի պահքեր գոյություն ունեն: Առաջինը սովորական պահքն է՝ կենդանական ծագում ունեցող սննդից (բացառությամբ մեղրի) և ոգելից խմիչքներից հրաժարումը: Երկրորդը սրբապահքն է՝ հրաժարումը նաև բուսական ծագման, սակայն ճոխ ու համադամ ուտելիքից՝ ընդհուպ մինչև սոսկ աղուհացով սնվելը (Մեծ պահքի շրջանը կոչվում է նաև Աղուհացից շրջան): Երրորդը ծոմն է՝ միառժամանակ ընդհանրապես հրաժարումը սննդից և անգամ ջրից: Իհարկե, կարելի է նկատի առնել պահքի օգտակարությունը նաև բժշկական տեսակետից, հատկապես Մեծի պահոց շրջանում, քանի որ գարնանամուտն առանց ճարպային, կենդանական սննդի անցկացնելը դրական ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Սակայն սխալ է այն մտայնությունը, թե պահքը սոսկ դիետա է՝ նիհարելու կամ որոշակի հիվանդություններից ձերբազատվելու համար: Պահքը չի սահմանափակվում միայն կենդանական սննդից հրաժարումով. այն առաջին հերթին հոգեկան ու բարոյական ամեն տեսակի ախտերից ու մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից ու գործերից մաքրվելն է, զղջմամբ ու ապաշխարությամբ աստվածահաճո և առաքինի կյանքին դառնալը: Պահոց շրջանում կարևոր է հոգևոր շնորհների ու հատկապես եղբայրասիրության մեջ զորանալը, քանի որ, ինչպես Եզնիկ Կողբացին է ասում.<<Մեկը կարող է կենդանու միս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միսը ծամել>>: Այս պարագային կարևոր է նաև մեկ այլ ծայրահեղությունից զգուշանալը. պահք պահելը չպետք է պատճառ դառնա պահեցողության մեջ տկարացող մեր եղբայրակցին դատելու. <<Ով ուտում է, թող չարհամարհի նրան, ով չի ուտում, իսկ ով չի ուտում, թող չդատի նրան, ով ուտում է>> (Հռոմ.14:3): Պահքի կարևորությունը առավել հարազատորեն ըմբռնելու համար պիտի ընդգծենք այն հանգամանքը, որ այն օրինադրվել է դեռևս դրախտում, և Աստծու կողմից մարդուն տրված առաջին պատվիրանը եղել է հենց պահք պահելը. <<Դրախտում ամէն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտութեան ծառից մի կերեք, որովհետեւ այն օրը, երբ ուտէք դրանից, մահկանացու կդառնաք>> (Ծննդ.2:16-17): Ի տարբերություն այլ եկեղեցիների, որոնք պարզապես թվակարգում են Մեծ պահքի 7 կիրակիները, Հայաստանյայց եկեղեցին սուրբգրային հիմք ունեցող յուրահատուկ անուններով ու խորհուրդներով է օժտել դրանք, որով նրանք կազմել են խորհրդանշական մի շղթա՝ արտացոլելով մարդու դրախտային կյանքի, պատվիրանազանցության ու անկման, աստվածորոնողության և աստվածային նախախնամությամբ փրկագործության ողջ ընթացքը: Պահքերի (բացառությամբ օրապահքերի) նախորդ օրերը կոչվում են <<բարեկենդան>>, իսկ Մեծ Պահքին նախորդում է Բուն Բարեկենդանը: Բարի կենդանություն, այսինքն՝ բարի, անհոգ և երջանիկ կյանք. այս իմաստն է ամփոփված <<բարեկենդան>> անվան մեջ, որ առավելագույնս արտահայտված ենք տեսնում Բուն Բարեկենդանի խորհրդում, որը Մեծ Պահքի առաջին կիրակին է և պատկերում է մարդու դրախտային երանավետ կյանքը: Այս խորհուրդը երևում է անգամ սննդի օգտագործման մեջ, քանի որ Բուն Բարեկենդանը կենդանական և ճոխ ուտելիք գործածելու վերջին օրն է: Մեծ պահքի երկրորդ կիրակին կոչվում է Արտաքսման և խորհրդանշում է մարդու՝ դրախտից արտաքսվելը և Աստծո տեսությունից զրկվելը: Հենց սա է խորհրդանշում ողջ Մեծ Պահքի շրջանում եկեղեցիների վարագույրների փակ մնալը և Ս. Հաղորդությունից հավատացյալների անմասն մնալը: Երրորդ կիրակին կոչվում է Անառակի և մատնանշում է առ Աստված դառնալու և կորուսյալ դրախտը գտնելու կարեվորագույն նախապայմանը՝ ապաշխարանքը: Չորրորդ՝ Տնտեսի կիրակին, ուսուցանում է նյութական հարստության տնօրինման կերպի դերը հավիտենական փրկության կամ կորստյան մեջ: Հինգերորդ՝ Դատավորի կիրակին, պատգամում է հարատև աղոթքի անփոխարինելի նշանակությունը փրկության համար: Վերջին՝ Գալստյան կիրակին, ամփոփում է Քրիստոսի ինչպես Ա Գալստյան խորհուրդը, այնպես էլ Երկրորդ գալստյան խոստումը: Մեծ Պահքին անմիջապես հաջորդող շաբաթը կոչվում է Ավագ Շաբաթ և ընդգրկում է Փրկչի երկրային կյանքի վերջին կարևորագույն իրողությունները՝ հաղթական մուտքը Երուսաղեմ (Ծաղկազարդ), Վերջին Ընթրիքը, Մատնությունը, Չարչարանքները, Խաչելությունը, Մահը, Թաղումը և ի վերջո հրաշափառ Հարությունը՝ Ս.Զատիկը:

Արտաքսման կիրակի

Մեծ Պահքի երկրոդ կիրակին կոչվում է Արտաքսման: Օրվա խորհրդի և անվան մասին Աստվածաշունչ մատյանի Ծննդոց Գրքում գրված է. ,...Եվ արտաքսեց նրան Աստված Եդեմի պարտեզից, որպեսզի մշակի հողը, որից և ստեղծվել էրե: (Ծննդ. 3:23): Նախապատմությունը հետևյալն է. մարդն ունկնդիր լինելով Սատանայի խաբեբայական խոսքերին, պատվիրանազանց գտնվելով՝ համտեսեց արգելված պտղից: Որպես պատիժ, մարդն իհարկե, անմիջապես չմահացավ, սակայն զրկվեց Աստծո կողմից շնորհված անմահությունից և անիծվեց: Այսուհետ, մարդն իր քրտինքով պետք է վաստակի օրվա հացը և կինը պետք է ցավով ու տառապանքով զավակ ունենա և վերջում էլ ասվեց նրան. ,...հող էիր և հող կդառնասե (Ծննդ.3.19):

Եկեղեցական հայրերն իմաստուն կերպով Քառասնորդաց Պահքի շրջանի կիրակիներն այնպես են դասավորել և այնպիսի անվանումներ ու խորհուրդներ տվել, որոնցով ի հայտ է գալիս մարդկության կյանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործություն, զղջում, ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու ևս մեկ առիթ է սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանն արդյունավետ անցկացնելու համար:

Անառակի կիրակի

ՀայաստանյայցԱռաքելականՍուրբԵկեղեցին ապաշխարության և պահքի մի գեղեցիկ շրջան է սահմանել հավատացյալների համար, որի կիրակիներից յուրաքանչյուրն իր անվանումն ունի Աստվածաշնչի որևէ պատմությանը համապատասխան: Մեծ Պահքի երրորդ կիրակին կոչվում է Անառակի, ըստ Ղուկասի Ավետարանում հիշատակվող անառակ որդու մասին պատմող առակի՝ (տես Ղուկ. 15:11-32) մի մարդ իր կրտսեր որդու խնդրանքով ունեցվածքը բաժանում է երկու որդիների միջեւ: Կրտսեր որդին իր բաժինը վերցնելով գնում է հեռու երկիր, ապրում ցոփ ու շվայտ կյանքով, վատնում ամբողջ ունեցածը:

Այս դժվար դրության մեջ նա հիշում է հայրական տունը, զղջում կատարածի համար և վերադառնում: Հայրը, տեսնելով որդու զղջումը, ուրախությամբ ընդունում է նրան: Ավագ որդին դժգոհում է, որ ինքը միշտ հոր կողքին է եղել, սակայն նման պատվի երբեք չի արժանացել: Հայրը պատասխանում է, որ պետք է ուրախ լինել, քանի որ՝ ով մեռած էր, կենդանացավ: Ավագ, կրտսեր որդիներն արդար և մեղավոր հոգիներն են, և ինչպես հայրն է անառակ որդուն ընդունում, նույն կերպ էլ Աստված է իր գիրկն առնում զղջացող մեղավորին: Առակը նաեւ հետեւյալ խրատն ունի, որ բացահայտվում է ավագ որդու կերպարում: Ովքեր կարծում են, թե արդար են, պետք է խուսափեն սեփական անձի մասին չափազանց բարձր կարծիք ունենալուց:

Տնտեսի կիրակի

Մեծ Պահքի չորրորդ կիրակին կոչվում է Տնտեսի, ըստ այդ օրվա խորհուրդը բացատրող անիրավ տնտեսի մասին առակի: Այն հիշատակում է միայն Ղուկաս ավետարանիչը, որի բովանդակությունը հետևյալն է: Մի մեծահարուստ իմանում է, որ տնտեսը վատնում է իր ունեցվածքը, կանչում է նրան եւ հաշիվ պահանջում, որոշում հեռացնել աշխատանքից: Տնտեսը հասկանում է, որ կարող է անգործ մնալ, խորամանկության է դիմում: Նա կանչում է տիրոջ պարտապաններին, նրանց շնորհում իրենց ունեցած պարտքի մի մասը: Եվ այս ամենից հետո տերը գովում է տնտեսին՝ հնարամտությամբ վարվելու համար: Առաջին հայացքից թվում է, թե հակասություն կա այս գովեստի մեջ: Բայց անիրավ տնտեսը պարտապաններին շնորհում է այն, ինչն ավելիով գրել էր իր օգտին՝ պարտքի շնորհումով՝ ոչ մի վնաս չպատճառելով իր տիրոջը: Տերը գովում է տնտեսին՝ իր հասանե լիք շահույթից հրաժարվելու համար: Այսինքն՝ հույժ գովելի է հրաժարումը, որն էլ հենց պահքի իմաստն է:

Պահքը մարդուն որեւէ գայթակղությունից հրաժարվելու ունակություն է սովորեցնում, հրաժարում, որից սկսվում է ինքնազսպումը կամ անձի ուրացումը: Քրիստոս ասում է. ,Եվ ով իր խաչը չի վերցնում ու Իմ ետևից չի գալիս, Ինձ արժանի չէե (Մատթ. 10:38): Այս առակը հորդորում է յուրաքանչյուրին հրաժարվելով և ինքնազսպմամբ հասնել փրկության: Առակի այլաբանական իմաստն այս է: Հարուստ մարդը խորհրդանշում է Աստծուն, անիրավ տնտեսը՝ մեղավորին, որը երկար ժամանակ անհոգ կերպով վատնում էր Աստծո տված շնորհները, մինչեւ որ Աստված նրան պատասխանատվության է կանչում: Անիրավ տնտեսը խորհրդանշում է այն բոլոր մարդկանց, ովքեր զղջում են, ներում իրենց պարտապանների պարտքերը եւ սիրելի դառնում հրեշտակներին ու արդարներին:

Դատավորի կիրակի

Մեծ Պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի: Այդ օրվա խորհուրդը բացատրում է այրի կնոջ եւ դատավորի մասին առակը (Ղուկ. 18: 1-5): Ըստ առակի՝ մի այրի կին, անընդհատ խնդրում է Աստծուց չերկնչող եւ մարդկանցից չվախեցող դատավորին՝ իր դատն անելու: Դատավորը կնոջից ազատվելու համար ստիպված բավարարում է նրա պահանջը: Այս առակը պատմելուց հետո Քրիստոս հավաստիացնում է բոլորին, որ եթե անարդար դատավորն այրի կնոջ դատը տեսավ, ապա Աստված առավել ևս կկատարի բոլոր նրանց խնդրանքները, ովքեր միշտ աղոթքով խնդրում են:

Առակը հորդորում է ամեն ժամ աղոթել, որը խորհրդանշում է հոգու մշտական մղումն առ Աստված, բայց միևնույն ժամանակ իրական աղոթքի կոչ է: Առակը պատմելուց հետո Քրիստոս ասում է. ,Իսկ երբ մարդու Որդին գա, արդյո՞ք երկրի վրա հավատ կգտնիե (Ղուկ. 18: 8): Առակում Հիսուսը տալիս է երկրորդ գալստյան գաղափարը: Տիրոջ բառերի մեջ տխրություն ու թախիծ է զգացվում: Փրկչի համար ցավալի է, որ շատ մարդիկ կարող են ենթարկվել Ահեղ դատաստանի՝ արքայության ժառանգորդներ լինելու փոխարեն:

Գալստյան կիրակի

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան: Այս կիրակին Հիսուս Քրիստոսի Առաջին Գալստյան՝ մարդեղության հիշեցումն է: Հաստատվեց այն ճշմարտությունը, որ Փրկչի Գալստյամբ հնարավորություն ընձեռնվեց մարդկությանը փրկության ուղով առաջնորդվել: Այս կիրակին միևնույն ժամանակ Երկրորդ Գալստյան խորհուրդն ունի: Ավետարաններում և առաքյալների թղթերում բազում հատվածներ և անդրադարձներ կան Երկրորդ Գալստյանը նվիրված: Տերը զգուշացնում է Երկրորդ Գալստյան և նրա նախանշանների մասին. ,Զգույշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի, որովհետև շատերը կգան իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը. և շատերին կմոլորեցնեն: Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր...:

Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորությունն՝ թագավորության դեմ, և պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց: ... Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի: Բայց ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվիե (Մատթ. 24: 4-13): Այս է Գալստյան կիրակիի խորհուրդը՝ կոչ համբերության, բարեպաշտության, պարկեշտության, որովհետև հոգու բյուրեղացմամբ և ճշմարիտ հավատով մարդ կարող է սպասել Տիրոջ հրաշափառ Գալստյանը: Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն էլ ունեն Գալստյան անունով կիրակի:

Հայ Առաքելական եկեղեցու ՈՒկրաինայի մամլո դիվան

ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ

7-ին	Ավետումն Ս.Աստվածածնի
12-ին	Ծաղկազարդ
18-ին	Ճրագալույց Ս.Զատիկի
19-ին	Ս.Զատիկ
20-ին	Հիշատակ Մեռելոց
24-ին	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր

В следующем номере



**24 АПРЕЛЯ
День памяти жертв геноцида армян**

9 мая – 15-я годовщина освобождения города Шуши

История армянского «Хачкара»

Встреча председателей национальных общин Украины

Новые достижения Союза армянской молодежи Украины

«Становлення Вірменської дипломатичної місії в Україні у 1918-1920 рр.»

Продовження. Початок в №29 .

Розглядаючи питання дипломатичних відносин між Вірменією та Україною, необхідно звертати увагу на внутрішнє політичне положення в Україні, де влада різко змінювалась, а також на міжнародну ситуацію. На початку 1919 р. більшовицька армія починає наступ в напрямі Києва. З наближенням більшовиків до столиці дипломатичні місії починають залишати місто та евакуватися до Одеси. В цей час влада в Одесі належала Добровольчій армії.

Напередодні вступу радянських військ до Києва, 2 лютого, Директорія-УНР евакуювалась до Вінниці, а вже 5 лютого у столиці полювали більшовики. Разом з більшістю послів і консулів в Одесу прибуває і вірменський посол, який залишив столицю, як і інші, з політичних міркувань. В Одесі вірменський посол С.Г.Дзамоєв одразу починає переговори з місцевою владою щодо питань закупівлі та вивезення продовольчих товарів для Вірменії, в чому своє сприяння обіцяють Е.Енно і Грішин-Алмазов. З приїздом посла в роботі вірменського консульства нічого не змінюється, лише дипломатична місія розширює свій штат і, як раніше, знаходиться за адресою: вул. Катериненська, 1.

Треба відзначити, що вірменські дипломати досить активно та вдало працювали, наприклад, Добровольча армія у січні в Одесі проголосила мобілізацію, що ввело у непорозуміння мешканців. Внаслідок чого вірменський консул М.Б.Попов 13 лютого через місцеву пресу вимушений був надати коментарі та пояснення: «Наказ про мобілізацію офіцерів та юнкерів взагалі відноситься виключно до підданих Росії, і ні в якому разі не може розповсюджуватися на підданих Республіки Вірменія та Грузії. На мою думку, від влади на днях буде необхідне пояснення».

В умовах громадянської війни більшовикам вдається захопити владу в більшій частині України, усі вірменські дипломати по мірі наступу військ вимушено залишали акредитовані місця та прибували до Одеси. В Одесу раніше прибув харківський вірменський консул Меликянц. Помітимо, окрім централізації всієї дипломатичної місії в Одесі, місцева вірменська громада 23 лютого створила Національну раду, головою якої був обраний В. Е. Таїрян, помічниками А. Бахдасарян, А. Мтікян, секретарем протоієрей Ованнес Чубарян. Національна рада складалась з комітетів, які очолили: біженців С. Азнавурян, благодійний та праці В. Бояджян, фінансовий М. Аствацатуров, культурний А. Егизарян. Таким чином, місто перетворилося на потужний вірменський осередок, який стає головною вірменською координуючою громадою. На початку лютого при консульстві відкривається інформаційне бюро, яке одразу через пресу інформувало про необхідність візування від'їжджаючих у Вірменію громадян. Протягом березня 1919 р. завдяки роботі консульства з Одеси до Вірменії відправляється 3000 військовополонених та стільки ж біженців.

Не треба забувати, що громадянська війна продовжувалась і політична ситуація була нестійкою, внаслідок чого в країні та у містах влада швидко змінювалась. Українські радянські війська 6 квітня 1919 р. вступили в Одесу. Наступного дня Вірменська дипломатична місія та консул з консульським штатом разом з іншими дипломатами на Французькому військовому кораблі залишили Одесу. Напередодні евакуації, 5 квітня, М.Б.Попов консульського секретаря Є.Х.Мелікяна призначає виконуючим обов'язки консула і передає усі речі та справи консульства. Залишившись в Одесі, в.о. консула Є.Х.Мелікян намагається налагодити контакт з українським радянським урядом. 20 квітня місцеві іноземні консули – грузинський, вірменський, персидський, німецький, шведський, датський, швейцарський мали зустріч з головою Раднаркому України Х.Раковським, під час якої Х.Раковський повідомив, що на території УРСР можуть перебувати лише ті консули, уряди яких визнають Радянську Україну. Голова Раднаркому зі східних держав помітив Персію та Китай, а з числа інших країн виділив консулів Грузії і Вірменії, відносно яких Х.Раковський заявив, що було б досить бажаним їх перебування для встановлення економічних та торгових зв'язків між ними та Україною. На зустрічі Є. Х. Мелікян помітив, що вірмени визнають одну об'єднану Вірменію, яку не поділяють на Турецьку і Російську, незалежність і автономію якої вже визнано радянською Росією, особистим декретом В.І.Леніна. У свою чергу Х.Раковський висловив свої симпатії до вірменського народу і незалежності Вірменії та помітив: «Я знайомий з вірменським питанням, особисто спілкувався із дружніми керівниками дашнакської партії та бажаю приєднання Вірменії і звільнення до берегів Середземного моря». Однак при цьому не дав однозначної відповіді, чи може вірменське консульство залишатися в Одесі, але пообіцяв, повернувшись з Києва вирішити це питання. Таким чином, положення консульства залишилось невирішеним, але воно продовжувало свою діяльність. На жаль, такий стан довго не продовжувався, спочатку більшовиками було заборонено друкування вірменської газети, потім по черзі були зачинені усі вірменські установи: дамський комітет, національна рада, створений вірменський комісаріат та консульство.

У період більшовицького панування вірменське консульство та вірменські установи припинили свою діяльність. Однак зі вступом у місто 23 серпня Добровольчої армії положення змінилось. Вірменська газети 8 вересня зазначила: «Поновлена діяльність забороненого більшовиками вірменського консульства, зараз почали функціонувати відділи: паспортний, біженський та інформаційне бюро». Помітимо, що радянською владою у громадян Республіки Вірменія були вилучені паспорти, в зв'язку з чим консульство наголосило про анулювання останніх, замість яких почало видавати нові. Біженський відділ почав нове реєстрування біженців та формування списків, для відправлення у Вірменію. Внаслідок п'ятимісячного більшовицького панування евакуація біженців не відбувалася. Для вирішення цього питання Є.Х.Мелікян 8 вересня зустрівся з командуючим військами Одеського округу полковником Туганом-Барановським. На зустрічі командуючий обіцяв своє сприяння. Необхідно звернути увагу, що Є.Х.Мелікяну за досить короткий час вдалося сформувати консульський штат чисельністю 11 осіб: секретар – А. С. Бардуханян, зав. інформаційним відділом –А.К.Багдасарян, зав. біженським відділом–А. К. Єгизарян, діловодство біженським відділом – Л. Атабеков, службовець відділу - Х.О.Мірзаянц, бухгалтер - Є.І.Артін, юридичний радник – Г.Ф.Юзбашян, кур'єр – С.Манукян, лікар - І. Г. Багдасарян, друкар - Н. А. Мелкумянц.

Вірменським консульством було запропоноване відкриття при установі особливого торгового відділу, яке повинно було сприяти товарообігу та забезпеченню Вірменії продовольчими товарами, а також сприяло діяльності вірменських купців.

Сформувавши та налагодивши діяльність консульства Є. Х. Мелікян переходить до найбільш болючих питань. В місті перебувало більше 3000 біженців, яких треба було негайно відправити на Батьківщину. З метою швидкого відправлення біженців консул 9 вересня зустрівся з командиром англійського судна, капітаном Керром (на той час виконував обов'язки англійського консула), який запевнив, що саме вірменські біженці будуть відправлені у першу чергу з Одеси. Знайдені матеріли свідчать, що у вересні 90 біженців консульством були відправлені у Вірменію.

В одеській пресі 13 вересня з'являється повідомлення, що Вірменією при Добровольчій армії назначений офіційний дипломатичний представник Сагателян. Треба звернути увагу, що стан зв'язку в час, що розглядається був дуже поганий, майже не існував, а нормальний встановлений був лише наприкінці жовтня. Внаслідок чого консульство діяло без відома Республіки Вірменія, про це свідчить відправлений 24 вересня Є.Х.Мелікяном рапорт МЗС Вірменії, який в Єревані отримали лише 4 листопада. Рапорт зводився до наступного: «Після віддалення радянської влади Вірменське консульство відразу вивісило свій прапор і поновило свою діяльність. Знаходжу, що уряд не буде відмежовуватися від надання подальших консульству необхідних вказівок для діяльності та про мій сучасний невирішений стан». З встановленням влади Добровольчої армії, знову виникло питання мобілізації. Згідно з офіційним циркулярним повідомленням представника Республіки Вірменія при Добровольчій армії О.Сагателяну, проблема вірменських громадян вирішувалась наступним чином. Вірмени, уродженці Закавказзя, народженні 1880-1900 рр., підлягали мобілізації й повинні були стати на консульській облік, і зобов'язані в місячний термін прибути до вірменських таборів для вступу у Вірменську армію.

На початку грудня в Одесі стало відомо, що відповідно до прийнятого проекту МЗС одеське консульство реорганізоване у генконсульство, якому підпорядковуються консули Києва, Криму, Харкова та Бесарабії. Це є останньою інформацією про вірменське дипломатичне представництво. Зі вступом в Одесу і становленням радянської влади 8 лютого 1920 р. діяльність консульства було заборонено.

Давід Давтян

Редакция

Учредитель:
Всеукраинская Ассоциация Общественных Организаций «Союз Армян Украины»

Редакция :
Ответственный за номер: Артем Караджян
Директор: Тигран Авакян
Главный редактор: Медеа Атян
Редактор: Мгер Мнацаканян
Журналист: Анна Каграманян
Рекламный отдел: Ерванд Ервандян
Фотограф: Розанна Арустамова

Редакционная коллегия :
Председатель : Айк Памбухчян, Самвел Тигранян, Гагик Шахазизян, Сурен Сардарян, Эдуард Хачатрян, Мирослав Торосян, Андрей Киян, Артур Бейбутцян

Адрес редакции:
01601, г. Киев, бул. Леси Украинки, 34, оф. 502
Тел./факс: (044) 461-9122
г. Одесса, Гагаринское плато 5, Армянский культурный центр
Редакция газеты: av@sau.in.ua
Секретариат САУ: info@sau.in.ua
www.sau.in.ua

Подписной индекс 96301
Всю ответственность за точность и содержание рекламной информации несет рекламодатель.
Отпечатано в типографии «Черноморье», г. Одесса, пл. Независимости, 1
Тел.:(0482) 65-00-21.
Тираж 10 000 экз. Заказ №
Свидетельство о регистрации КВ №11156-36Р от 13.04.2006 г.

Рецепты от шеф-повара ресторана АРАРАТ

КАВАРМА АДЖАР

Филе телятины – 200 г
Лук репчатый – 100 г
Болгарский перец – 50 г
Грибы, чеснок – 30 г
Томатная паста – 50 г
Растительное масло
Перец, соль, специи по вкусу.

Телятину нарезать тонкой соломкой и обжарить на растительном масле с луком, перцем и грибами. Довести до полуготовности. Добавить мелко нарезанные помидоры или томатный сок. Затем соль, перец, специи и выложить на индивидуальную сковородку с отварным рисом. Посыпать зеленью.

Хашлама

Баранина -1 кг
Свежие помидоры- 2 шт
Картошка – 4 шт
Острый перец -1 шт
Сладкий перец -1 шт
Лук – 2 шт
Пиво – 300 гр
Зелень, соль, перец по вкусу.
Выкладывается в кастрюлю слоями :
Баранина
Лук
Перец острый
Перец сладкий
Картошка
Нарезанные помидоры

Заливается пивом, накрыть крышкой. Готовиться на маленьком огне. Довести до полуготовности и выложить картошку, после чего посолить. Готовое блюдо посыпать мелконарезанной зеленью.

ХАШ

Хаш – 500г
Соленья – 400 г
Брынза – 100 г
Чесночный соус – 100 г

Это блюдо готовиться из телячьих ножек, которые отвариваются очень длительное время. Подается ножка с бульоном, чесноком и сушенным лавашом. Для повышения аппетита и вкуса мы подаем порцию солений и брынзы.

Концерт Гару в Украине

Гару (Garou) — франко-канадский музыкант,певец и актёр. Настоящее имя — Пьер Гаран (Pierre Garand). Гару родился в городе Шербрук в провинции Квебек 26 июня 1972-го года. Он рос в доме, где всегда звучала музыка. Его бабушка, Кетеви Гаранян, как-то взяла маленького Пьера на руки и тихо сказала: «Когда-нибудь этот голос заставит плакать не одно женское сердце!» И она оказалась права.

24 и 26 марта знаменитый певец Гару выступил с концертами в Одессе и Киеве.

10 лет назад, когда композитор Люк Пламондон проводил кастинг для своей новой постановки «Notre-Dame de Paris», его поразили голос и внешность одного из артистов. Через 3 месяца засияла звезда с поистине мировым потенциалом. В прессе о нем говорили «Красавчик Квазимодо». Гару стал получать похвалы и награды по всему миру за свою сценическую игру и превосходный вокал. Кроме этого, мировая общественность признала песню «Белль» лучшей песней за последние 50 лет.

После большого успеха в «Notre-Dame de Paris», уже известный широкой публике Гару становится по-настоящему знаменитым. Его музыка – светлые, нежные баллады, исполненные полным силы баритоном классического вокалиста. Брайан Адамс, Селин Дион, Патриция Каас, Шарль Азнавур и другие выдающиеся исполнители считают за честь спеть с талантливым Пьером Гару. Почему именно Гару?

«Гару» – в переводе с французского означает «волк-оборотень». Еще в 13 лет друзья друг другу давали клички. Один из друзей изменил окончание настоящей фамилии Пьера – Гаран и выпалил «Гару». Всем понравилось, включая новоиспеченного оборотня.

Когда сегодня певца спрашивают, в чем секрет его успеха, Гару говорит: «Неужели Вы думаете, что оборотень скажет Вам правду? Но, по-моему, я чертовски талантлив. Моя бабушка так говорила».»Вооруженный хриплым голосом....можно остаться в шляпе, но потерять голову.... только от голоса и открытой улыбки....не верите? Это Артист, от песен которого прямо мурашки по коже... Потрясающая улыбка, двухметровый рост и бездна обаяния... Бывает достаточно взгляда, жеста, тембра голоса... и все – БЕРЕГИСЬ!!! Он, как герой фильма «Джеймс Бонд» – обожающий женщин, сигары, покер, скотч и, самое главное – в каждой песне он безукоризненно играет роль, перевоплощаясь в героя» А теперь – в музыкальное путешествие...

Евросоюз отменит визы для Армении

Программа ЕС «Восточное партнерство» предусматривает в перспективе установление безвизового режима с входящими в нее странами на постсоветском пространстве - Арменией, Азербайджаном, Белоруссией, Грузией, Молдавией и Украиной.

Такое положение содержится в проекте заявления открывающегося в четверг в Брюсселе саммита ЕС.

В документе, который приводит сайт Евросоюза, отмечается, что шаги на пути к либерализации визового режима с этими странами будут приниматься «в долгосрочной перспективе и в индивидуальном порядке». Об этом сообщает «Интерфакс».

Analitika.at.ua.